Ուստի այս անգամ՝ մեր Ազգարարութիւնն կրկնելով յատկապէս կը խնդրեմք մեր Ազգային լրագրապետներէն նոյնն հրատարակել իւրեանց թերթերուն մէջ ՚ի պատիւ Ս. Աթոռոյս և ՚ի զգուշութիւն համօրէն Ազգայնոց :

## ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆՔ

Այս տարի տէրունական Ս. Տեղեաց տօնախմբութիւններն և Զատկական հանդէսներն խիստ օրինաւորութեամբ և խաղաղութեամբ կատարուեցան և տեղւոյս Վսեմ. Կուսակալն յատկապէս շնորհակալութիւն մատոյց Ս. Աթոռոյս Ամենապատիւ Պատրիարքին հայազգի ուխտաւորաց համար, յայտնելով, որ նոքա ոչ միայն ինքնին կանոնաւոր շարժեցան տօնախմբութեանց ժամանակ, այլ նաև ընդհանուր խաղաղութիւն պահպանելու համար օժանդակեցին Տէրութեան պաշտօնէից՝ իւրեանց բարեսէր վարմունքով.

—Պրուսիացիք կը շարունակեն փորել Յովհաննու Ասպետութեան կարգին վերաբերեալ աւերակին փլատակներն, զոր Պրուսիոյ Թագաժառանգ Իշխանն իւր այցելութեան ժամանակ Երուսաղէմ ընդունեց Օսմանեան Տէրութենէն՝ եկեղեցի, հիւանդանոց և դպրոց կառուցանելու համար: Այս անգամ խիստ զարմանալի հնութիւններ ելան փլատակներէն, մանաւանդ շատ հին ոսկի դրամներ, զորս Մեծ. Հիւպատոսն փութացաւ իւր Տէրութեան կայսերական թանգարանն ղրկել:

## ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

### ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
### ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ
### ԱՌԱՔԵԼԱԿԱՆ Ս. ԵԿԵՂԵՑՒՈՅ

Ի
Մ. Վարդապետէ Մուրատեանց
Յառաքելական ուխտէ Սրբոց Յակոբեանց.

Տպագրուած է արդեամբք բարեպաշտ Մահտեսի Կիրակոսի Բարունակեանց Երզնկացւոյ, յօգուտ և ՚ի պայծառութիւն Քառանգաւորաց Վարժարանի Ս. Աթոռոյս, փայլուն ձևով, մաքուր թղթի վրայ և 640 երեսէ բաղկացեալ: Կը պարունակէ Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ Պատմութիւնն, իւր սկզբնաւորութենէն մինչև 1867 թուականն, որոյ արժանեաց և կարևորութեան գնահատութիւնն բանիբուն ընթերցասիրաց անաչառ դատաստանին կը թողումք.

Գին 16 դահեկան.

---

### ԱԳՆԷՍ
ՎԷ ԵԱ
### ՆԷՅ ՋԱԼԱՆ ԳԸԶՃԸՂԱԶ

Ֆրանսըզճէտէն թէրճիւմէ էյլէյէն էտիպլէր
Յանպաղէ Յ. Մ. Պէրպէրեանօֆֆ.

Գին 4 դահեկան.

---

### ԳԱԳԻԿ
### ՎԵՐՋԻՆ ԱՐՔԱՅ ՀԱՅՈՑ
### ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

ԹԱՏՐԵՐԳՈՒԹԻՒՆ
Ի ՀԻՆԳ ԱՐԱՐՈՒԱԾՍ

Գրեաց
Ս. Կարապետ Տէր Մինասեան, ՚Ի Ս. ուխտէ Սրբոց Յակոբեանց.

Գին 5 դահեկան.

digitised by A.R.A.R.@